Ծրագիրը համաֆինանսավորվում է
Եվրոպական Միության կողմից

«Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար»

Մրցույթի հրավեր թիվ 09072018

(Մեդիա ընկերություն/գործակալություն)

1. **Ծրագրի նկարագիր.**

«Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից և իրականացվում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»-ի և Մասստրիխտում գործող «Եվրոպական լրագրության կենտրոն»-ի կողմից: Ծրագրի նպատակն է օգնել հայ բնակչությանը՝ հատկապես մարզերում, մեծացնել պետական բյուջեի, պետական ծախսերի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և իրազեկել կառավարության կողմից բյուջեի ծախսերի վերաբերյալ հաշվետվություն ստանալու իրենց իրավունքների մասին:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ծրագիրը կսկսի ազգային և մարզային ՔՀԿ-ների վերապատրաստմամբ՝ նրանց տալով անհրաժեշտ գիտելիք և հմտություններ, որպեսզի նրանք կարողանան լիովին աջակցել քաղաքացիներին անհրաժեշտության դեպքում ստանալ հավաստի տեղեկատվություն: Վերապատրաստումների ընթացքում փոխանցված գիտելիքը ՔՀԿ-ներին կօգնի տեղեկացված լինել ԵՄ-ի կողմից Հայաստանին ցուցաբերվող օժանդակության մասին, և հատկապես, թե որոլորտներում և ինչպես է ԵՄ-ն աջակցում Հայաստանում զարգացման ծրագրերին: Այդ ոլորտները ներառում են պետական ծրագրեր հանրային առողջապահության, տրանսպորտի, շրջակամիջավայրի, էներգաարդյունավետության և այլ ոլորտներում: Վերապատրաստումների ընթացքում ՔՀԿ-ներին կներկայացվի նաև պետական բյուջեի մշտադիտարկման մեթոդաբանությունը: Այնուհետև, մենք կֆինանսավորենք 10 ՔՀԿ-ների, որպեսզի նրանք կարողանան համագործակցել պետական մարմինների հետ և նշված ոլորտներում բյուջետային բաշխումներին առնչվող ծրագրեր իրականցնել: Այս 10 ենթադրամաշնորհային ծրագրերի միջոցով նրանք կառաջարկեն կառավարությանն օգտագործել բյուջետային ռեսուրսների պլանավորման և/կամ ծախսերի առավել արդյունավետ միջոցներ:

Մաաստրիխտում գործող Եվրոպական լրագրության կենտրոնի հետ համագործակցությամբ մեր ծրագիրը նպատակ ունի նաև վերապատրաստել երիտասարդ լրագրողներին, որպեսզի նրանք ավելի շատ ընդգրկվեն հետաքննական լրագրության մեջ և կարողանան քաղաքացիներին ներկայացնել հետաքրքիր և խորապես ուսումնասիրված պատմություններ արդի տարբեր հիմնահարցերի վերաբերյալ, ներառյալ պետական բյուջեի պլանավորման և դրա նպատակային ծախսման մասին: Վերապատրաստումն իրականացվելու է նկարահանվող մրցույթի ձևաչափով, որի արդյունքում արտադրվելու են լրագրողական հետաքննությունների պատմությունների աուդիովիզուալ նյութեր (էպիզոդներ)՝ հասարակության լայն զանգվածին մատուցելու նպատակով: Լրագրողական հետաքննությունների պատմությունների բովանդակությունը մշակվելու է ծրագրի ղեկավարների կողմից: Հայտատուն պարտավորվում է միայն ապահովել սույն հրավերի 2-րդ բաժնում նկարագրված ծառայությունները:

2. Մրցույթին մասնակցությունը

Սույն մրցույթին մասնակցությունը հավասարապես բաց է բոլոր այն իրավաբանական անձանց համար, որոնք գրանցված են Եվրոպական Միության անդամ երկրներում, Հայաստանում, ինչպես նաև այն երկրներում, տարածաշրջաններում որոնք նշված են ԵՄ Գործնական ուղեցույցի Հավելված ա2-ում (Annex a2 to the Practical Guide):

3. Ծառայության նկարագիր.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն հայտարարում է մեդիա ընկերության/գործակալության մրցույթ՝ իրականացնելու ստորև նշված ծառայությունները.

1. Ծրագրի PR մենեջերի ղեկավարության ներքո՝ ծրագրի տեսանելիության և PR-ի ապահովում ամբողջ ծրագրի ընթացքում (19 ամիս), մասնավորապես՝

   ա. մշակել և կազմակերպել ծրագրի հաղորդակցման և հանրային կապերի ընդհանուր մեթոդաբանությունը,

   բ. մշակել եւ իրականացնել ծրագրով նախատեսված լրատվական արշավներ՝ հնարավոր բոլոր եղանակների օգտագործմամբ,

   գ. ստեղծել և տարածել ծրագրի հրապարակայնությունն ապահովող աուդիովիզուալ և/կամ գրավոր նյութեր,

   դ. ապահովել ԵՄ-ի համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերին առաջադրված տեսանելիության բոլոր պահանջները սույն ծրագրի համար (բրոշուրներ, թռուցիկներ, պաստառներ, և այլն) (*ԵՄ տեսանելիության ուղեցույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://ec.europa.eu/europeaid/node/17974 , կիրառելի են և 2010թ-ի, և 2018թ-ի ուղեցույցերը*),

2. Ծրագրով նախատեսված հետաքննական լրագրության մրցույթի նկարահանում, մասնավորապես՝

ա. 24 պատմությունների լրագրողական հետաքննությունների էպիզոդների արտադրություն և հետարտադրություն,

Այս ծառայության մեջ մտնում է մեդիա ընկերության կողմից նաև նկարահանող խմբի տրամադրում, որը ներառում է՝ ռեժիսոր, պրոդյուսեր, 3 օպերատոր, մոնտաժող, պավիլիոնի առկայություն, ինպես նաև արտադրության և հետարդատրության համար անհրաժեշը տեխնիկայի առկայություն:

բ. 24 պատմությունների լրագրողական հետաքննությունների էպիզոդների տարածում սեփական կայքէջում, ինչպես նաև հեռարձակում լրատվամիջոցների հաղորդակցման այլ հնարավոր գործիքների միջոցով՝ ընդհանուր 6 ամիս տևողությամբ,

4. Ընտրության չափանիշներ.

Հաղթող հայտատուի ընտրությունը իրականացվելու է ներքոնշյալ պահանջների հիման վրա.

1. բարձր վարկանիշ (սոցիալական ցանցերում ընկերության/գործակալության էջի առավելագույնք քանակով հավանումներ և/կամ հետևորդներ, ամսական միջին հաշվով 2.5-3 միլիոն այցելություններ ընկերության/գործակալության կայքէջ)
2. վերջին 1 տարվա ընթացքում հայտատուի կայքէջում կամ սոցիալական ցանցի էջում հրապարակված նյութերի բովանդակության քաղաքական չեզոքություն
3. փորձ լրագրողական վիդեո-հետաքննությունների իրականացման մեջ (ընկերության/գործակալության կողմից իրականացրած առնվազն 10 լրագրողական վիդեո-հետաքննություններ),
4. իրավական և լրագրողական էթիկայի հարցերով ներքին խորհրդատվական թիմ, որի աշխատանքի արդյունքները պետք է արտացոլվեն ներկայացված տեսանյութերի մեջ:

5. Ծառայության գնային առաջարկը

2-րդ բաժնում նկարագրված բոլոր ծառայությունների իրականացման համար հայտատուների կողմից ներկայացվող ընդհանուր գնային առաջարկը չի կարող բարձր լինել 66,770 Եվրոյին համարժեք ՀՀ դրամից (առանց ԱԱՀ):

6. Հայտերի ներկայացման կարգը

Ներկայացված պահանջներին բավարարող և հետաքրքրված մեդիա ընկերությունները/գործակալությունները կարող են իրենց հայտն և դրան կից փաստաթղթերն ուղարկել foi@foi.am էլ.հասցեին: Նամակի վերնագրում անհրաժեշտ է նշել «Մեդիա ընկերություն/գործակալություն»:

Հայտը ներկայացնելու համար անհրաժեշտ է լրացնել Հայտի ձևաթուղթը (կցված է):

Հայտին պետք է կցված լինի՝

1. Հայտատուի՝ սույն հրավերի 4-րդ բաժնում նշված պահանջներին համապատասխանությունը հիմնավորող ապացույցներ,
2. Հայտատուի՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման վկայականը, իսկ օտարերկրյա պետությունում գրանցված լինելու դեպքում՝ իրավաբանական անձի գրանցման փաստաթուղթը և կարգավիճակը հավաստող փաստաթուղթ (Certificate of Good Standing):

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018թ հուլիսի 20-ը ժամը 24:00:

Մրցույթի արդյունքի մասին հայտատուի կողմից ներկայացված հայտում նշված կոոտակտային անձը կտեղեկացվի մինչեւ 2018 թ. հուլիսի 31-ը:

Ընտրված ընկերության/գործակալության հետ նախատեսվում է կնքել Ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագիր:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն իրավունք է վերապահում ցանկացած պահի չեղյալ հայտարարել սույն մրցույթը և այդ մասին տեղեկացնել հայտատուներին, կամ նախքան Ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագիր կնքելը հրաժարվել նշված պայմանագրի կնքումից՝ այդ մասին տեղեկացնելով և հիմնավորելով մրցույթում հաղթած հայտատուին, և անհրաժեշտության դեպքում հայտարարել նոր մրցույթ: